ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» Սեպտեմբեր 2021թ. ՆՄՈ/406-2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 02/11./32847-2021 հանձնարարականը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատուներ նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ Արուսյակ Բեգլարյանին և քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ Արմեն Համբարձումյանին, իսկ ծառայողական քննություն (կարգապահական վարույթ) իրականացնող պատասխանատու նշանակել՝ անձնակազմի կառավարման բաժնի պետ Նաիրա Մարտիրոսյանին:

2. Պատասխանատուներին (Արուսյակ Բեգլարյանին, Նաիրա Մարտիրոսյանին, Արմեն Համբարձումյանին)՝

1) Արուսյակ Բեգլարյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի պահանջները.

2) Նաիրա Մարտիրոսյանին՝ ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրություն (զեկուցագիր) ներկայացնելու

հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետ և նախատեսել նման բացատրության (զեկուցագրի) գրավոր ներկայացման պահանջը:

3) Արմեն Համբարձումյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերի պահանջները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 28.09.2021 15:17:24 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230